ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

—o—

ՑՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

—

Ստացանք Թիֆլիսում պ. Միքայէլ Աթաբէկեանից 25 ռուբլի։ Ուրեմն նախկին ստացած 277 ր. գումարի հետ (տես «Մշակ» № 219) ունենք 302 ռուբլի։

—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՑՕՐԵԼԵԱՆԸ

(Հեռագրով)

Շուշի, 5 հոկտեմբերի

Հ. Առաքելեանին, Թիֆլիս.

Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը, ընտրելով ձեզ իր ներկայացուցիչ, խնդրում է ձեզ բարեհաճել գնալ Էջմիածին, մասնակցել իր կողմից յօբելեանական հանդէսներին, լինել արտայայտիչ մեր բերկրութեան զգացմունքների՝ հայ ազգի պատմական հռչակաւոր օրվայ տօնախմբութեան առիթով։

Նախագահ հոգաբարձութեան՝ կառավարիչ Ղարաբաղի թեմի՝ Զաւէն վարդապետ

—

(Հեռագրով)

Շուշի, 5 հոկտեմբերի

Տիգրան Նազարեանին, Թիֆլիս

Ղարաբաղի թեմի ծխական ուսումնարանների անունից խնդրում եմ լինել պատգամաւոր, բարեհաճել ներկայ լինել Էջմիածնում յօբելեանական հանդէսներին, արտայայտելով Ղարաբաղի թեմի դպրոցների կողմից խնդակցութիւն պատմական այս նշանակալից օրվայ առիթով։

Ղարաբաղի թեմ. կառավարիչ՝

Զաւէն վարդապետ

—